# ՍԻՐՈ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՄԵՋ՝ ԸՍՏ ՀԱԿՈԲ (ՊԱՏՐԻԱՐՔ) ՆԱԼՅԱՆԻ

ՎԱՀՐԱՄ ԼԱԼԱՅԱՆ

«Մատեան ողբերգութեան» սգահանդեսում Նարեկացու դաժան ինքնահալածանքը և ցուցաբերած անձնամարտ վարքը ոչ միայն ապաշխարող անձի հոգեկեցության բնույթով են պայմանավորված, այլև Աստծո նկատմամբ զորավոր սիրո արտահայտություն է. «բարւոք էր ինձ մեռանիլ, քան թէ զԱստուած մեղօք վշտացուցանել»[1]: Նարեկացու սրտի խորքից հորդող սաստիկ զղջման աղբյուրը, ըստ Նալյանի, բխում է Աստծո սիրո կրակից, որով նա «զինքն այրէր եւ իբրեւ զմորենին անկիզելի մնայր»[2]: Ճգնավորական «ոգուց» ծնված «այս որակի» սերը, սակայն, «երկրային արմատներ» չունի և աստվածային շնորհի ներգործության պտուղ է. «Ով սիրում է իր անձը, կը կորցնի այն, իսկ ով այս աշխարհում իր անձն ատում է, այն կը պահի յավիտենական կեանքի համար» (Յովհ. ԺԲ 25): Ըստ Օգոստինոսի, սերն այնքան զորավոր էր, որ Աստծուն «ստիպեց» երկնքից երկիր իջնել և խաչին բևեռվել[3]: Սիրո խորհրդանիշը, ըստ Նալյանի, տարերքների մեջ հուրն է, հրեշտակների դասերից՝ սերովբեները, ծաղիկների մեջ՝ վարդը, ազնիվ մետաղներից՝ ոսկին[4]: Սերն է նաև, որ փոխում է մարդուն, ինչպես հուրը՝ երկաթը[5]: Սա արդեն սիրո խորհրդական զորության պտղաբերությունն է, որը Նարեկացին իր մեջ չի տեսնում.

| | |
|---|---|
| «**Իբր ի քրայս ընտրութեան փութոյ քոյ սիրոյ՝** | **4** |
| **Հանապազ եռամ եւ ոչ երբէք մարզիմ** | **5** |
| **Միշտ խառնիմ զուգիլ եւ ոչ եւս միանամ,** | **6** |

---

[1] **Յակոբ (պատրիարք) Նալեան**, Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, հրեշտակական վարդապէտին (այսուհետև՝ Հ.Նալյան), Կ.Պոլիս, 1745, էջ 50: Hakob Nalean, Girq meknutean aghotic srbuyn Grigori Narekacvo, hreshtakakan vardapetin, K.Polis, 1745, ej 50:

[2] Նույն տեղում, էջ 11:

[3] Հմմտ. նույն տեղում, էջ թ:

[4] Հմմտ. նույն տեղում:

[5] Հմմտ. նույն տեղում:

**Ահա զուր արծաթագործդ, երկնաւոր իմ ճարտարապետ, 7**
**Ի սնոտիս վաստակեալ առ իս աշխատիս...»: 8**

**Բան ԿԹ (ա...)**

Ըստ Նալյանի մեկնաբանության՝ Աստված կամենում է իր սիրո հրով կիզել խորհրդազգածի էությունը, որպեսզի մաքրվի օտարածին (եկամուտ) մեղքերից, սակայն երկաթի ժանգի պես,-ասում է Նարեկացին,-չեմ մաքրվում՝ զրկվելով առ Աստված խորհրդական սիրո միության երանությունից[6]: Առ Աստված խորհրդական միավորումը սիրով է, քանզի սերը որդեգրության շնորհի հասուն պտուղն է և բոլոր առաքինությունների վերջին հանգրվանը: Ս. Հոգու շնորհն էր (առ Աստված) սեր բորբոքում, ինչպես Պողոս առաքյալի, այնպես էլ Նարեկացու հոգում, որպեսզի Աստծո սիրո կրակով կտրվեն այս աշխարհին կապող սիրո հանգույցները[7], որն էլ ստիպում է հոչակավոր իմաստասերին՝ պաշտպանելու իր անձը գովաբանությունից.

«Եթէ աւրհնի յումեքէ յայտնի 76
Ի ծածուկ զանձն անիծանէ 77
Եթէ գովեստ յումեքէ լսէ, 78
Պարսաւանաւք զինքն կշտամբէ» 79

**Բան Լ (դ...)**

Այս ձգտումն արդեն ինքնանպատակ չէ, այլ Բարձրյալի սերը շահելու և Նրա հետ միավորվելու վախճանին է միտված.

**«Եւ արդ, զիա՞րդ ոչ ողորմեսցիս, բարեգութ, 96**
**Այսքանեացս ձայնարկութեանց կողկողագինս հեծեծանաց... 97**
**Առ յանդգնելոյս մոլութիւն՝ ողորմութիւն քո, 102**
**Առ կործանելոյս այցելութիւն՝ աջ քո, 104**
**Առ բժշկութիւն անողջանալի խոցվածոյս՝ մատն քո, 106**
**Առ վրիպելոյս առաջնորդութիւն՝ լոյս քո, 113**
**Առ նեղելոյս ընդարձակութիւն՝ կամք քո, 118**
**Առ ատեցելոյս կոչումն՝ սէր քո, 119**
**Առ հոգւով վիրաւորելոյս՝ կաթուած արեան քո, 121**
**Առ պատուաստումն կտրեցելոյս՝ կցորդութիւն քո» 124**

**Բան Լ (ե...)**

---

[6] Հմմտ. նույն տեղում, էջ ն.ղ.թ.:
[7] Հմմտ. նույն տեղում, էջ ժ:

Կամ, ըստ Նալյանի՝ Քեզանից ես բաժանվեցի սեր չունենալու պատճառով, բայց Դու կարող ես ինձ Քեզ կցորդել ու Քեզ միավորել Քո սիրո զորությամբ[8]:

Մեղքի դեմ պայքարում զորավոր գործոն է Աստծո հանդեպ սերը: Սիրել Աստծուն ամբողջ հոգով, սրտով, մտքի ողջ զորությամբ, պիտի հասկանալ՝ որքան սիրտը կարող է տանել, իմացականությունը (առանց սխալվելու) իմանալ, անձը՝ մնալ Աստծո կամքի մեջ (առանց հակառակության), իսկ միտքը (անմոռաց հիշողությամբ)՝ Նրա ներկայության հայեցության կեցվածքում[9]:

Եթե ճգնավորի սրտում առ Աստված սերը դրսևորվեր ըստ մարդկային բնության կարողության, ապա Ս. Հոգուց տրված շնորհական զորությունը կսահմանափակվեր, քանի որ մարդու բնությունն արդեն սահմանավոր է[10]: Իսկ ճշմարիտ սերը, ազատագրված լինելով երկրային կապանքներից, խորհուրդներից ու վախերից, (ներառելով հույսն ու հավատը) զորավոր խթան է խորհրդազգածի համար իր խաչակրության մեծ ճանապարհին («ոչ ոք կարէ բաժանել զմեզ ի սիրոյն Աստուծոյ» հռոմ. Ը-9)[11]: Սիրո առաքինության «բարձունքներին» է ձգտում նաև Նարեկա վանքի «մեծ սգավորը», թեև նա իրեն շատ հեռու է դասում այդ ընթացքից (կարո՞ղ է ինքն էլ ասել).

**«Թէ՝ բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ»**

**Բան ԿԱ (բ-48)**

Թեև մարդկային ճիգերը, ներքին կամեցողությունը (կամքը) չափազանց կարևոր են Աստծո սիրուն արժանանալու համար, բայց միայն Ս. Հոգու շնորհն է, որ կարող է վերափոխել մարդու սիրտը և ցանկալի դարձնել Աստծուն: Կամ.

**«...հարսնապաճոյճ պարծանաւք պճնել գեղայաւրէն,**
**սուրբ վայելչութեամբ՝ երջանկապէս յոգի զարդարեալ»**

**Բան ՂԳ (իդ 531-532)**

Եսայի մարգարեն իր մասին խոսում էր իբրև Աստծո առաքինությամբ զարդարված, նույնպես և հավատացյալ քրիստոնյայի հոգին է որպես Քրիստոսի հարս պճնվում շնորհներով[12]: Եվ Աստված չի բնակվում ցասմնալից

---

[8] Հմմտ. նույն տեղում, էջ 230:
[9] Հմմտ. նույն տեղում, էջ 451:
[10] Հմմտ. նույն տեղում:
[11] Հմմտ. նույն տեղում, էջ 451-ն.ծ.բ.:
[12] Հմմտ. նույն տեղում, էջ 709:

ու խռովարկու հոգիներում, այլ հեզ ու հանդարտ, թեև (ըստ մարգարեի) կարող է բարկասիրտի քայքայուն բնությունը հանդարտ հեզության փոխակերպել[13].

**«Որ դարձուցանես զմրրիկ մեղաց ի յաւդ քաւութեան»**

**Բան ԿԳ (ա-7)**

Եղիա մարգարեի տեսիլքում Աստված լեռներ սարսռեցնող և վեմեր խորտակող հողմի մեջ չէր, այլ մեղմ հովից լսվեց Նրա ձայնը[14]:

Եկեղեցու զավակները, մկրտությամբ ընդունելով որդեգրության հոգին, շնորհով դառնում են Աստծո որդիներ, որոնց կապն առ Աստված հիմնված է մաքուր սիրո վրա, ի տարբերություն ծառայի և վարձկանի. «ոչ վարձկանապէս սիրովն խոստացելոցն սիրէր զԱստուած, այլ միայն վասն ինքեան Աստուծոյ»[15]:

**«Ոչ ի տուրսն, այլ ի տուողն յավէտ կարաւտիմ»**

**Բան ԺԲ (բ-21)**

Որդիական սերը, որ դրսևորվում է Հոր տան հանդեպ, անձնազոհ նվիրումի անբիծ սերն է, որ արմատներով հասնում է մինչև Մկրտության (ըստ հայոց ծիսակարգի) «պատվաստի»-ազնիվ տունկ՝ Քրիստոս և Ս. Հոգու շնորհ:

Խորհրդական սերը[16] ոչ միայն որդիական սիրո (ազնվական կեցվածքի, մաքրության, տան հանդեպ նախանձախնդրության ոգու) հատկանիշներով է ամբողջանում, այլև հարս ու փեսայի սիրո որակների (ընտանության, հոգեհարազատության, սքանչացման, անճառելի բերկրության) ճառագումներով.

**«Զի ոչ այնքան յուսոյն հանգուցիւ,** 19
**Որքան սիրոյն կապանաւք բերկրիմ»** 20

**Բան ԺԲ (բ...)**

Այսինքն, մեղքով հնացած (Քո պատկեր) հոգիս, հալոցքի քուրայում սիրո բովիդ մեջ առնելով (խոսքիդ փչման կայծակումով)՝ վերստին ձուլի՛ր և շնորհովդ մաքրի՛ր[17].

**Ոչ փառքն են ինձ անձկալի,** 22
**Այլ փառաւորեալն է համբուրելի,** 23
**Ոչ կենացն փափագանաւք,** 24
**Այլ կենարարին յիշատակաւն միշտ ճենճերիմ,** 25

---

[13] Հմմտ. նույն տեղում, էջ ն.ծ.զ.:
[14] Հմմտ. նույն տեղում:
[15] Նույն տեղում, էջ 101:
[16] Տե՛ս նաև **Минин П.** Главные направления древнецерковной мистики", Мистическое Богословие, Киев, 1991, стр. 361-362:
[17] Հմմտ. նույն տեղում, էջ 135:

**Ոչ վայելիցն տարփանաւք հեծեմ, 26**
**Այլ հանդերձաւղին տենչանաւք՝ յերիկամաց աստի կականիմ, 27**
**Ոչ զհանգիստն խնդրեմ, 28**
**Այլ զհանգուցչին երեսս աղաչեմ, 29**
**Ոչ հարսնարանին խնջոյիւք, 30**
**Այլ փեսային անձկութեամբ մաշիմ: 31**

**Բան Ժբ (բ..)**

Սա արդեն խորհրդական սիրո բացառիկ խոստովանություն է (այնպես որ Նարեկացու «Մատեանը» ոչ միայն մեղքերի խոստովանություն է, այլև սիրո):

Աստծո հետ սիրո միությունն արդեն սպառնալիքի տակ է հայտնվում մեղքի պատճառով, որը, ըստ Շնորհալու, մարդու հոգին այրի է դարձնում ու բաժանում երկնային փեսայից՝ Քրիստոսից կամ Ս. Հոգուց[18]: Այդպիսի խզումը Նարեկացու համար անտանելի է, և նրա պայքարը միության համար է.

**«Եղիցի ողորմութիւն ստեղծողիդ ընդ իս 129**
**Եւ շունչ ոգւոյս իմ ընդ քեզ՝ 130**
**Անբաժանաւրէն կապաւ միացեալ ի մի» 131**

**Բան Ղ (ե..)**

Քրիստոսից որդեգրության հոգին ընդունելով և սիրո ազատության մեջ հաստատվելով՝ առաքյալները սիրո հուրը տարածեցին երկրի վրա: Այսպես Աստծո Որդին (ըստ Նարեկացու) դարձավ.

**«Սկզբնահայր եւ նախաշավիղ սիրոյն ընթացից»**

**Բան Ղ (բ-20)**

Քրիստոս աշխարհ եկավ «սիրոյ օրէնքը» առ Աստված և առ ընկեր հաստատելու և աստվածային սիրո ճառագայթներով մարդկային սրտերը ջերմացնելու[19]: Մկրտության ժամանակ աստվածային սիրո պտուղները ճաշակելու և մաքրվելու համար հավատը բավարար է, իսկ մկրտությունից հետո կատարվող ապաշխարության մաքրագործումն արդեն ջանքեր է պահանջում՝ Ս. Հոգու շնորհի հետ համագործակցություն, Աստծո սիրուն հասնելու որոշակի ճանապարհ: Ամեն դեպքում Նարեկացու իղձն է Աստծո ողորմությամբ սրբվելով՝ որդեգրության շնորհի մեջ վերականգնվելը.

**«Ընկա՛լ եւ մատո՛քավեալ եւ սրբեալ զիս՝ զամենապարտս, 76**

---

[18] Հմմտ. նույն տեղում, էջ 661:
[19] Հմմտ. նույն տեղում, էջ ո. ծ.զ.:

**Բանդ կենդանի, առ հաւասարապատիւ քո հոգի** **77**
**Զի քեւ վերստին հաշտեալ յիս դարձցի,** **78**
**Եւ ի ձեռն քո իւրովն կամաւք մաքուր նուիրեալ** **79**
**Զաւրեղն ինքնութեամբ զիս Հաւր ընծայեալ...** **80**
**Շնչոյս ողջունիւ կապեալ ընդ շնորհիդ՝** **82**
**Ի Քեզ միանալ անբաժանելի»:** **83**

**Բան Իդ (դ...)**

Այս միության մեջ է անձնավոր հոգին դառնում պտղաբեր ու կենսունակ: Ու Նարեկացին Աստծուց հեռանալու կամ անջատվելու վտանգը խորապես զգալով է, որ ասում է.

**«Մի՛ խզեր զկապ միութեան զընդ քեզ սիրոյն պնդութեան»**
**Բան ՀԸ (գ-56)**

Իսկ հոգևոր պսակազերծումն ու երկնային փեսայից՝ Քրիստոսից (կամ Ս. Հոգուց) բաժանումը, թեկուզ ներգործական մեղքերի պատճառով, Նարեկացին շատ ծանր է տանում, քանզի մերկանալով հարսնյաց զգեստներից ու զարդերից՝ իրեն նմանեցնում է հիմար կույսերին և հարսանյաց զգեստ չունեցողին, որին ծառաները տիրոջ հրամանով արտաքին խավարն են նետում և դուռը ծածկում.

**«Զզարդ հարսանեաց կրկին մերկացայ** **62**
**Եւ զձէթ վարուցն վերստին լքի,** **63**
**Եվ դուռն մտին հարսնեացն աւասիկ փակի»** **64**

**Բան ԿԸ (գ...)**

Ընդ որում այստեղ հարսանիքը մարդկային հոգու և Քրիստոսի խորհրդական սիրո միավորության[20] ուրախությունն է Արքայության մեջ, «զարդ հարսանեացը»՝ առաքինության պատմուճանը, իսկ «ձէթ վարուցը» լքելը՝ հավատի կամ առաքինության գործերի գնահատականը, երբ անձը պղերգության մեջ է հայտնվում[21]:

Նարեկացու զղջումն անգամ միահյուսված է առ Աստված սիրուն, քանի որ նա չի ցանկանում լինել առաքինությամբ վեհագույնների մեջ, այլ կատարյալ զղջացողների.

---

[20] Տե՛ս նաև **Լալայան Վ.**, Ինը երանիները հայ խորհրդաբանական աւանդոյթի մեջ, «Էջմիածին», 2009. Ժ, էջ 23-24, 30-31: **Lalayan V.**, Iny eraninery haj khorhrdabanakan avanduyti mej, «Etchmiadzin», 2009, 10, ej 23-24, 30-31:

[21] **Հ. Նալյան**, նույն տեղում, էջ 494-ն.ղ.ե.:

**«Ոչ ընդ ամբարձեալսն, այլ ընդ բեկեալսն եւ ընդ խորտակեալսն»**
**Բան Լ (բ-24)**

Ըստ Նալյանի՝ «բեկեալների» զղջումը կատարյալ չէ, այլ «ծառայավարձ-կանական» (դժոխքի տանջանքների երկյուղից և «արքայութեան բարիքների ակնկալութիւնից»[22]):

Եվ միայն խորտակումն է կատարյալ զղջումը (Նալյանի կարծիքով), քանզի լոկ Աստծո սիրուց է մղված[23]: Աստծո հետ սիրո միությունը կարող է թուլանալ մեղքերի պատճառով, որովհետև մարդկային հոգին, որպես երկնային փեսայի հարս, կարող է թեթև մեղքերով հիվանդանալ ու «փեսայի» կողմից չլքվել, թեև մահացու մեղքերի դեպքում բաժանումն անխուսափելի է[24]:

Աստված իրեն զոհաբերեց մարդու փրկության համար, իսկ սատանային և անկյալ հրեշտակներին դատապարտեց (հմմտ. Յովհ. ԺԶ-11).

**«Վասն նորա ոչ երբէք չարչարեալ, 12**
**Եւ վասն իմ հանապազ պատարագի» 13**
**Բան ԿԷ (ա...)**

Մարդու նկատմամբ սերն արտահայտվեց նաև նրա վրա փրկագործական շնորհների հեղումով, ի տարբերություն անկյալ հրեշտակների և սատանայի.

**«Նա անհաղորդ է կենացն, 14**
**Եւ ես միշտ վայելեմ ի փրկութեանն» 15**
**Բան ԿԷ (ա...)**

Այսինքն, Ս. Հոգու պարգևները նրանք չստացան, այլ բոլորը հեղվեց մարդկանց վրա՝ ըստ այն խոսքի, թե «Հեղից յոգւոց իմմէ ի վերայ ամենայն մարմնոյ» (Յովել բ-28)[25]:

Սատանան մերժված է լույսի փառքից, իսկ եկեղեցու զավակը հավատով միացած է Աստծո փառքին, քանի որ Աստված է հավատացյալների փառքը՝ ըստ Եսայի (Ժբ-2)-ի[26].

**«Նա՝ հերքեալ ի լոյսն, 18**
**Եւ ես՝ միացեալ ընդ փառացն» 19**
**Բան ԿԷ (ա.....)**

---

[22]Հմմտ. նույն տեղում, էջ մ.ի.դ. 224:
[23] Հմմտ. նույն տեղում:
[24] Հմմտ. նույն տեղում:
[25] Հմմտ. նույն տեղում, էջ 488:
[26] Հմմտ. նույն տեղում, էջ ն.ձ.թ.:

Ըստ Նալյանի մեկնության՝ և՛ միտքն է լույս կոչվում, և՛ հոգու առաքինությունը[27]:

Քրիստոսի Արյամբ և Խաչի չարչարանքներով մարդուն փրկության հույս տրվեց, իսկ Ս. Հոգու շնորհներով՝ զորություն՝ դեպի (այդ) հույսը ընթանալու: Բայց սատանայի (և նրա հրեշտակների) փրկության հույսը Քրիստոս կտրեց՝ ասելով, թե այս աշխարհի իշխանը դատապարտված է (հմմտ. Յովհ. Ժզ 11).

**«Զնորայն կտրեաց զառհաւատչեայ** 22
**Եւ զիմն առանց խզելոյ յարակայեաց»:** 23
**Բան ԿԷ (ա...)**

Նրանց սողունների նմանեցրեց, իսկ մարդուն իր անունով Քրիստոնյա կնքեց.

«**Զնա սողնոց նմանեցոյց,** 28
**Եւ զիս իւրովն անուամբ կնքեաց»** 29
**Բան ԿԷ (ա...)**

Այսուհանդերձ, Աստծո բոլոր երախտիքները հիշելով՝ մարդը խորհրդական սիրո կրակով չի վառվում, այլ ըստ իր «հոգեւոր թռիչքի» աստիճանի, Ս. Հոգու շնորհն է խորհրդազգածի սրտում բորբոքում երկնասլաց սիրո հուրը.

**«Չիք իմ թագաւոր առ իշխել շնչոյս, բաց ի քէն, Քրիստոս...»**
**Բան Խթ (ա-8),**

որի համար Նարեկացին ձգտում է մեռյալ լինել այս աշխարհի հանդեպ՝ ըստ սաղմոսերգուի խոսքի.

**«վասն քոյ մեռանիմք զաւր հանապազ»**
**Բան Կ (դ-115)**

Այլ խոսքով, մեղքի նկատմամբ մեռնելով՝ մաքրագործվել և արժանանալ սիրով Աստծո հետ միության: Հարկ է նաև նշել, որ Մյուռոնի դրոշմով է Ս. Հոգու շնորհական զորությունը պարուրում մարդկային հոգին և ի կատար ածում ներքին վերափոխումն ըստ որդեգրության շնորհի:

Բայց սրբալույս մյուռոնը միայն սրբվածներից է ճանաչվում որպես «բարի լոյս եւ հրակեզ սէր» (հմմտ. Ղգ-ժա-260), «որով յիրաւի սովաւ ի յԱստուած է միանալի...» Բան ՂԳ (ժա 260-263):

Իսկ այս միավորությունը ոչ թե ըստ նյութական տարրերի է, այլ Ս. Հոգուց ճառագող սիրո միավորիչ ներգործության[28]:

---

[27] Հմմտ. նույն տեղում:

[28] Հմմտ. նույն տեղում, էջ զ.դ.ա.:

Հարս հոգու և փեսա Քրիստոսի կամ Ս. Հոգու խորհրդական միությունը «Նարեկ»-յան մեկնաբանություն է ստանում.

**«Ընդ Սողոմոնի աւծելոյ, որդեգրեցելոյ Աստուծոյ երգեմ**

**Բերանով հարսինն Երկնաւոր փեսայիդ բարեբան գոհաբանութիւն՝**

**Համբուրեալ ի յիղձս մտաց զհոտ իւղոց քոց քան զամենայն խունկս...»**

**Բան ՂԳ (ժա 263-266)**

Եթե խունկը խորհրդանշում է սրբերի առաքինությունները, իսկ յուղը՝ Քրիստոսի շնորհների պարզ, հստակ և մաքուր լիությունը, ապա Նարեկացին փափագում է Քրիստոսի յուղի հոտի «հետքերով ընթանալ» (շնորհների և առաքինության)՝ հոգու մեղավոր երեսը լվանալով Ս. Հոգու պարգև կյանքի ջրերով[29].

**«զհետ քո ի հոտ իւղոց քոց ընթացուք լուացեալ զերեսս ջուրբք կենաց»**

**Բան ՂԳ (ժա 267-268)**

Ըստ Նալյանի՝ մյուռոնի յուղով օծվածներն են Աստծո որդեգիրներ դառնում կամ շնորհով Աստծո որդիներ[30]: Այս օծմամբ (որ կոչվում է նաև հոգի) սրբվելով ադամական և մյուս մեղքերից՝ մարդը դառնում է երկնային քաղաքացի՝ Ս. Երրորդության ճշմարիտ երկրպագու՝ հույսով, հավատով ու սիրով միացած Աստծուն[31], քանզի առ Աստված սերը մարդու սրտում միայն այս օծումից հետո է ծնվում[32]:

Նարեկացին մյուռոնը կոչում է նաև **«Յարմարիչ վարուց»** Բան ՂԳ (ժը 414), սակայն ոչ թե մյուռոնի նյութը, այլ նրա մեջ բնակված Ս. Հոգու շնորհն է կարգավորում մարդու վարքը՝ պատրաստելով նրան Աստծու հետ միավորության, քանզի ինչպես աննմանների միջև սեր չի լինում, այնպես էլ՝ միավորություն[33]:

Աստված սեր է (հմմտ. Յովի Դ-8). «քանզի որպէս սիրոյն անուան կցորդես աստուած, նոյն պէս ի մասնէ եւ այսու զիջեալ գծագրիս՝ ըստ տնտեսութեանն, որ առ մեզ» **Բան Ղգ (դ 63-64)**: Ըստ Նալյանի՝ Աստված երեք կերպով է սեր անվանվում՝

---

[29] Հմմտ. նույն տեղում, էջ զ.դ.ա. 691:
[30] Հմմտ. նույն տեղում, էջ ո. դ. զ.:
[31] Հմմտ. նույն տեղում, էջ 696:
[32] Հմմտ. նույն տեղում:
[33] Հմմտ. նույն տեղում, էջ ո.դ.թ.:

Ա-նախ էականապես (Ս. Երրորդությունը սեր է)

Բ- Անձնավորաբար (Հայրը սեր է, Որդին սեր է, Ս. Հոգին սեր է)

Գ- տեսականորեն՝ որպես մարդկային սիրո չափանիշ և նախագաղափար[34]:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Գրիգոր Նարեկացու աղոթքը բխում է որդեգրության հոգուց, որովհետև նա Աստծուց ոչինչ չի պահանջում, այլ ինքն է ձգտում ապաշխարությամբ մաքրվելով Նրա սիրուն արժանանալ:

Արդեն Քրիստոսի առակներից հայտնի է, որ մարդ-Աստված հարաբերությունը որդիական սիրո աստիճանից բացի, առկա է նաև ծառայական և վարձկանական մակարդակներում, երբ հավատացյալը Աստծո պատվիրանները պահում է Վերջին Դատաստանի երկյուղից և դժոխքի տանջանքների սարսափից կամ Երկնքի Արքայության «բարիքների» խոստումից և դրախտային երանության ակնկալիքներից:

Ծառայական, որդիական և վարձկանական ապաշխարության գնահատման խնդիրն այս իրավիճակում դառնում է անխուսափելի: Ըստ Նալյանի մեկնության՝ անկատար է ինչպես «վախից ծնված» ծառայական ապաշխարությունը, այնպես էլ փրկության և երանության սպասումներից բխած վարձկանականը:

Եվ միայն որդիական սիրուց մղված ապաշխարությունն է կատարյալը:

Եթե մեղքերի խոստովանության արտասուքներով հոգին մաքրագործվում է, ապա սիրո խոստովանության ճառագայթներով միավորվում է Աստծուն: Այլ խոսքով, խոստովանողի սրտում ծագում է խորհրդական սիրո արեգակը, որն ամփոփում է ոչ միայն որդիական սիրո առաքինության որակները, այլև հարս ու փեսայի սիրուց ճառագող ջերմությունն ու լույսը: Ահա այսպես է ուրվագծվում Նարեկա վանքի ճգնավորի անճառելի սգերթը՝ կատարյալ զղջումն ու անթերի խոստովանությունը, սրտի հառաչանքն ու հեծեծանքը, ուրախարար սուգն ու արտասուքը, Աստծու հետ սիրո միավորության երանությունը. «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ…»:

**Բանալի բառեր** – Գրիգոր Նարեկացի, «Մատեան Ողբերգութեան», որդիական սեր, ծառայական սեր, վարձկանական սեր, խորհրդական կամ խորհրդապաշտական սեր, սիրո խորհրդաբանություն, սիրո խոստովանու-

[34] Հմմտ. նույն տեղում, էջ 681:

թյուն, Աստծո հետ սիրո միավորություն, մեղքերի խոստովանություն, կատարյալ զղջում, ապաշխարություն, Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ:

## МИСТИКА ЛЮБВИ В "КНИГЕ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ" ГРИГОРА НАРЕКАЦИ В КОММЕНТАРИЯХ АКОБА ПАТРИАРХА НАЛЯНА

ВАГРАМ ЛАЛАЯН

Молитва Григора Нарекаци исходит из души усыновления, поскольку он от Бога ничего не требует, а сам стремится очиститься покаянием и удостоиться Его любви.

Уже из притч Христа ясно, что любовное отношение между человеком и Богом, кроме степени сыновьей любви, присутсвуют также служебная и наемная уровни, когда верующий соблюдает божественные заповеди из страха Страшного Суда и ужасов адских истязаний, или из "благих" обещаний Царства Небесного и ожиданий райского блаженства. В этом положении становится неизбежной проблема оценки служебной, сыновней и наемной покаяний. Согласно толкованию Наляна, как служебное покаяние (порожденное страхом), так и покаяние наемное (исходящее из ожиданий спасения и блаженства), несовершенны. Совершенно лишь покаяние, возникшее из сыновней любви.

Если душа освящается слезами искупления грехов, то посредством лучей любовной исповеди она воссоединяется с Богом. Иначе говоря, в сердце исповедника восходит солнце мистической любви, которая содержит в себе не только качества сыновней любви, но и теплоту и свет, излучаемые любовью жениха и невесты.

Вот так прорисовывается неизреченное траурное шествие подвижника монастыря Нарек - совершенные раскаяние и исповедь, стоны и стенания сердца, возликующие скорбь и слезы, блаженство любовного воссоединения с Богом: "Слово к Богу, идущее из глубин сердца..." («Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ...»).

***Ключевые слова*** - "Книга скорбных песнопениий" Григора Нарекаци, сыновняя любовь, служебная любовь, наемная любовь, мистическая любовь, мистика любви, исповедь любви, любовное воссоединение с Богом, исповедь грехов, раскаяние, покаяние, Слово к Богу, идущее из глубин сердца...

## THE MYSTORY OF LOVE IN THE *BOOK OF LAMENTATION* BY GRIGOR NAREKATSI ACCORDING TO PATRIARCH HACOB NALIAN

VAHRAM LALAYAN

Grigor Narekatsi's prayer arises from an adopted soul, as he does not ask for anything from God, but by repentance and purification, he seeks to be worthy of God's Love.

It is known from the Parables of Christ that the relationship between human beings and God beside displaying a filial love, it also displays a relationship of servant and master, or lease holder, in which case the worshipers observe the commandments of God fearing the Last Judgment and the Hell tortures, or else hoping to get benefits of the Celestial Paradise and the promises of Heavenly beatitudes.

The assessment of repentance on servant, filial and lease levels in such a case becomes unavoidable. According to Nalian's interpretation, repentance is imperfect both on servant level (as repentance out of fear) and on lease holder level (as repentance out of hope for salvation or beatitude).

And exclusively repentance stimulated by filial love can be prefect.

If the confession of sins purifies the soul by tears, it follows that the soul, through the rays of love confession unifies with the Lord. In other words, in the soul of the repentant, the mysterious sun of love rises, which encompasses not only the virtuous qualities of filial love, but also the affection and light streaming from a loving bride and a bridegroom. This is how Narek Monastery's hermit's overwhelming emanation, impeccable repentance, irreproachable confession, heart moaning and groaning, rejoicing sorrow and tears, the bliss and beatitude of unifying with God in love is depicted: " A word to God from the depth of heart" («Ի խորոց սրտի խօսք ընդ Աստծոյ... »).

***Key words*** – Grigor Narekatsi's book of lamentation, filial love, a God servant's love, the love of a master, mystic love, the mysticism of love, Love confession, unification with God in love and beatitude, confession of sins, impeccable remorse, repentance, A word to God from the depth of the heart.